Հավելված N 8

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երեխայի իրավունքների պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 28-ի N41 արձանագրային որոշման իրականացման վերաբերյալ

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ և երեխայի պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, ինչը ենթադրում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանությաներաշխիքների ապահովում, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավում և նրանց ինտեգրում հասարակություն:

«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ»միջոցառման շրջանակում գործում է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատություն /մանկատուն/: Մանկատներից երեքը մասնագիտացված է, որտեղ խնամվում են ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ խախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող երեխաներ և չափահասներ: 2018 թվականին սույն միջոցառման շրջանակում նախատեսվել է խնամել 649 երեխայի, սակայն փաստացի խնամվել է շուրջ 593 երեխա (այդ թվում առողջական խնդիրներով՝ շուրջ 500 երեխա), ինչը պայմանավորված է հաստատությունների բեռնաթափման քաղաքականության արդյունքում երեխաների կենսաբանական ընտանիք վերադառնալու, որդեգրման և խնամատար ընտանիքներ տեղավորելու հանգամանքով:

Թեև ընդհանուր տիպի հաստատություններում բեռնաթափման և հաստատություներ մուտքի կանխարգելման գործընթացով պայմանավորված շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, սակայն հատուկ (մասնագիտացված) հաստատություններում նախատեսված թիվը ավելանում կամ մնում է անփոփոխ՝ պայմանավորված բուժհաստատություններից առողջական խնդիրներով նորածինների շարունակական ուղեգրմամբ, ինպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կենսաբանական ընտանիքներ վերադառնալու, որդեգրվելու կամ խնամատար ընտանիք տեղավորվելու գրեթե անհնարինությամբ: Հարկ է նշել, որ մասնագիտացված հաստատությունում՝«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում տասնութ տարին լրացած 16 սանի խնամքը շարունակվում է տվյալ հաստատությունում՝ պայմանավորված համակարգի

մասնագիտացված երկու հաստատության ծանրաբեռնվածության պատճառով տեղափոխության անհնարինությամբ:

«Հայաստանի Հանրապետության երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» միջոցառումն իրականացվում է 2006 թվականից ՀՀ Լոռու մարզում և 2014 թվականից՝ ՀՀ Շիրակի մարզում: 2017 թվականին նախատեսվել է հաստատություններից կենսաբանական ընտանիք վերադարձնել և կանխարգելել 120 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում կենսաբանականընտանիք է վերադարձել 10 և կանխարգելվել է 110 երեխայի մուտքը հաստատություններ:

«Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություններ մուտքի կանխարգելման համար երեխաների ընտանիքներին բնաիրայինօգնության փաթեթի տրամադրում» միջոցառումը նախորդ միջոցառման բաղկացուցիչ մասն է կազմում: Միջոցառման շրջանակում 120 շահառուի տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ, դասագրքեր, ինչպես նաև էներգետիկ ծառայությունների մասնակի փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության երեխաների շուրջօրյա խնամքի՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» միջոցառումը 2014 թվականից «Ակունք» ՀԿ-ի կողմից իրականացվել է «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան շրջանավարտների համար: Վերանայվել են ծրագրի խնդիրները, մշավել է նոր ծառայությունների մատուցման նկարագիր, սակայն տարվա ընթացքում ծրագիրն իրականացնող կազմակերպությունը չի ընտրվել, հետևաբար միջոցառումը չի իրականացվել:

«Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառման շրջանակում 11 շրջանավարտի տրամադրվել է միանվագ /50 հազ. դրամ/ դրամական օգնություն:

«Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» միջոցառումն իրականացվում է 3 կենտրոնում, որոնց գործունեության նպատակը ցերեկային ժամերին՝ կենտրոնի կանոնադրությամբ կամ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ժամանակահատվածում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող 6-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումն է, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման աջակցությունն է, տարվա ընթացքում բազմագործառույթ ծառայությունների մատուցումն է, երեխա-ընտանիք կապի ամրապնդումը, երեխաների մուտքի կանխարգելումը շուրջօրյա հաստատություններ: Երեք կենտրոնում 2018 թ. նախատեսվել է ցերեկային խնամք տրամադրել 300 երեխայի: Սույն միջոցառման շրջանակում ներկենտրոնային

ծառայություններ է տրամադրվել 6-18 տարեկան միջինը 249 երեխայի: Հարկ է նշել, որ երեխաների և նրանց ընտանիքների գնահատված կարիքների արդյունքում բազմամասնագիտական արտակենտրոնային ծառայություններ և խորհրդատվություններ են մատուցվել առավել մեծ թվով /շուրջ 400/ երեխաների և նրանց ընտանիքների:

«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում «Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է նաև 3-18 տարեկան երեխաների մինչև վեց ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

2018 թվականին ժամանակավոր շուրջօրյա խնամք է տրամադրել միջինը 17 երեխայի: Տարվա ընթացքում երեխաների թիվը շարունակաբար փոփոխվել է՝ պայմանավորված մասնագիտական աշխատանքների արդյունքում նրանց կենսաբանական ընտանիք վերադարձով, դրա անհնարինության դեպքում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող այլ հաստատությունում տեղավորելով: 2018 թվականի ընթացքում շուրջօրյա խնամքի ծառայությունում ներգրավվել է 60 երեխա:

«Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակում երեխաների խնամքի գիշերօթիկ չորսհաստատությունում 2018 թվականին նախատեսվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ 621 երեխայի շուրջօրյա խնամք, սակայն հաստատություններում փաստացի խնամվել է միջինը 375 երեխա՝ պայմանավորված երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների վերակազմակերպման գործընթացով՝ մասնավորապես «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» և «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ների վերակազմակերպմամբ:

«Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման նպատակը կենտրոնների սպասարկման տարածքում երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրսբերումն է, այդ թվում՝ կենտրոններում ցերեկային ժամերին՝ կենտրոնների կանոնադրությամբ կամ այլ ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին խնամք տրամադրելը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը: Միջոցառման շրջանակում նախատեսվել է երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում 2018 թվականին ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրել 300 երեխայի և արտակենտրոն ծառայություններ՝ 167 երեխայի: Տարվա ընթացքում ծառայություններ են տրամադրվել 12 երեխայի և նրանց ընտանիքներին: Շահառու երեխաների՝ նախատեսվածից պակաս թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ համայնքի ընտանիքներն իրազեկված չեն, կենտրոնն ունի տրանսպորտի խնդիր :

«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախարարության համաֆինանսավորմամբ «Հույսիկամուրջ» հասարակական կազմակերպության չորս ցերեկային կենտրոնում /Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ/ ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված 250 երեխայի:

«Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N92 ներառական մանկապարտեզում» նախարարության համաֆինանսավորմամբ 2017 թվականի ընթացքում միջոցառման շրջանակում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N92 ներառական մանկապարտեզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող մինչև 6 տարեկան միջինը 20 երեխայի մատուցվել են բազմամասնագիտական ծառայություններ:

«Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (մանկատներում) խնամվողդպրոցահասակ երեխաներինդրամականաջակցությանտրամադրում» միջոցառման շրջանակում 7-18 տարեկան երեխաներին տրվում է մանրծախսերիհամարնախատեսվածգումար /գրպանիգումար/: 2018 թվականին նախատեսվել է գումար տրամադրել 191 երեխայի, սակայն նախատեսված գումարը տրամադրվել է փաստացի դպրոց հաճախող 103 երեխայի: «Խնամատարընտանիքումերեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում 2018 թվականին նախատեսվել է խնամք տրամադրել առանց ծնողական խնամքի մնացած 94 երեխայի: Տարվա ընթացքում խնամվածների միջին թիվը կազմել է 35՝ պայմանավորված չափահաս շահառուների ծրագրից դուրս գալու հանգամանքով: Ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականությամբ պայմանավորված՝ խնամատար ընտանիքներում կազմակերպվում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը:

«Թրաֆիքինգի զոհերին սոցիալ հոգեբանական վերականգնողական օժանդակության տրամադրման նպատակով պետական աջակցություն» միջոցառումն ուղղված է հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովմանը, որի շրջանակում նախարարության և «ԱՄՔՈՐ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն յուրաքանչյուր տարի թրաֆիքինգի զոհերին՝ 32 անձի /միաժամանակ 8 անձի՝ մինչև երեք ամսով/ տրամադրվում են սոցիալ հոգեբանական վերականգնողական ծառայություններ:

«Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառումն իրականանում է պետական ծրագրի նպատակն է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու ընթացքում անձի կրած վնասների մասնակի փոխհատուցումը: Դրամական փոխհատուցման իրավունքը տարածվում է այն անձանց վրա, ովքեր զոհ են ճանաչվել ՀՀ վարչապետի 2015 թվականի

սեպտեմբերի 15-ի N835-Ա որոշմամբ ստեղծված մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից: Ծրագրի շահառու է նախատեսվում 7 զոհ: Քանի որ անհնար է կանխատեսել միտումները, միանվագ դրամական փոխհատուցման միջոցները հաշվարկվում են հիմք ընդունելով նախորդ տարվա՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց փաստացի քանակական տվյալները: 2018 թվականին ծրագրի շահառու է համարվել 5 զոհ: